

րուցած փոթորիկներէն, Սակայն զօրախա-
տարար Եղեսիա նորանոր յուզումներով
աղմկեցաւ, երբ անարժան իրասը բար-
ձրացաւ եպիսկոպոսական աթոռին վրայ,
էս հոս Բարուլասի կեանքին մէջ երկու
գիծերը միայն մէջ բերի, որոնք սերտ
առնչութիւն մ'ունէին մեր պատմութեան
հետ, շատ զօրաւ ըլլալով կարենալ հոս
բազմակողմանի գործունէութիւնը պատկե-
րացնել այս քանի մ'էջներուն մէջ, որով
հարկ պիտի ըլլար նաև նիւթէն դուրս
ելլել: Սակայն այս մեծ դէմքը, ծածկուած
դարերով սխալ անուան տակ, հետևարար
շատ քիչ ծանօթ մերիններուն, ոչ միայն
հիացում կ'ազդէ մեզի, այլ և հմայիչ և
համակրելի կը զգոնայ, երբ մոտածնէր որ
ինքն եղաւ առաջին անգամ որ հիւրասի-
րեց Ս. Մեսրոպ և իր աշակերտները
Եղեսիոյ մէջ, «բազում մեծարանք ցու-
ցեալ հասելոցն», երբ անոնք օտարու-
թեան մէջ կը տառապէին, — ինքն եղաւ
որ քաջաբերեց զՄեսրոպ, օգտակար խոր-
հուրդներ տուաւ և յանձնարարական գրով
ուղարկեց Սամուստ քաղաքը, ուր նոյն-
պէս «մեծապատիւ յեպիսկոպոսէն և յե-
կեղեցւոյն մեծարեալ լինէր»: Յետ գրոց
սընչեղի գիւտը ձեռք բերելու, և անով
Սողոմոնի Առակաց քրքին անդրանիկ
թարգմանութիւնն ընելու, երբ Մեսրոպ
դարձաւ նորէն Եղեսիա առ Բարուլաս,
սա անհուն հրճուանքով ընդունեցաւ զինքը,
և խնդակցութեան թուղթեր յանձնելով
տանելու առ Ս. Սահակ, սիրով և պա-
տուով ուղարկեց զինքը Հայաստան:

Վերջին անգամ մ'ալ կը տեսնենք Բա-
բուլաս իր բարձրութեան մէջ այն պա-
րագլին, երբ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ
իրենց աշակերտներէն երկու յառաջադէմ-
ները, Յովսէփ Պաղնացի և Եզնիկ Կող-
բացի, Եղեսիա կը զրկեն՝ ասորի Ս. Հարց
գրեքը թարգմանելու և իրենց զրկելու:
Աւելորդ է ըսել թէ Բաբուլաս ինչ սէր
և հայրական գուրգուրանք ցուցուց այդ
աշակերտաց, իրեն խնամոց յանձնարա-
րուած ըլլալով իրենց սուրբ Վարդապետ-
ներէն: Ինքն էր որ բանալ տուաւ անոնց

առջև Եղեսիոյ դիւանները, զրաւ առջևին
ասորի Ս. Հարց գրութիւնները, հար-
թեց զօւարութիւններ, լուծեց լեզուական
կնճիռները, մոյց, հիւրընկալեց ու խնա-
մեց զանոնք իր իր սաները, որոնք ասորի
մատենագրութեան հրաշակերտներէն ծու-
լեցին հայերէն լեզուի հրաշակերտներ:

Հ. ՅՈՂԱ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՎՆԱՐԿ ՄԸ

«ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» Ի

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒԴԻՆ



ՈՐՔԱՆ որ Եզնիկ ուղղակի բնական
գիտութեան վերաբերեալ գրութիւն մը չէ
թողած մեզ, սակայն բաւ է քիչ մը ու-
շադիր դիտել և իսկոյն պիտի ցոլանայ
ոսկեմատեան «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»-ին մէջ
հեղինակին բնագիտութեան վրայ ունեցած
մեծ հմտութիւնը:

Կողբացին ինչպէս յայտնի է վերոյի-
շեալ գրքոյկէն՝ ոչ միայն աղբիւրի դիմող
ծարաւի եղջերոսի նման արբեր և մինչև
ցվերջին կաթիլ ծծեր է Արիստոտէլներու
ու Պլատոններու, Եպիփաննիոս և Ռսկե-
րերաններու գրեանքը, այլ և երկինքը ու
երկիրը և բոլոր բնութիւնը՝ իրեն բաց մա-
տեան մը կարգացեր է. որոնցմէ անխտրի
հաստատ համոզմամբ կ'ապացուցանէ և
կը հաստատէ բոլոր իւր վարդապետու-
թիւնը:

Եզնիկայ բնական գիտութեանց բաժինը
երկու մասի կընանք վերածել.

Ա. Երկրայինը (բուսաբանական, կեն-
դանաբանական են):

Բ. Երկնայինը (այն է՝ աստղաբաշխա-
կան):

Թողունք առ այժմ այս երկնայիններն՝
աստղերն ու արեգակը, որք ըստ իր
գեղեցիկ բանաստեղծական նմանութեան՝
«Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձե-

« զուան և յատակի լուցեալ, զիսաւարն և « զստուերն զերկուց մեծաց անօթոց ի բաց « ի միջոյ փարատեն » :

Անիդեցիցի՝ որոնց վարդապետութեան եղծման կ'աշխատի Եզնիկ, բարւոյ և չարի առանձին արարիչ կը ղնէին. կողբացին զո՛ր չ'ըլլար միայն իմաստասիրութեամբ ըմբերանել այն թանձրամիտ տղամաշաղախ մտերիւր, այլ անոնց մտաց վիճակին հաւմամտ, նիւթական շօշափելի փաստեր ևս կը բերէ։ Կը շարժէ ահա իւր բնագիտական գրիչը՝ ցուցնելու համար թէ՛ ա. « Չիք ինչ որ բնութեամբ չար իցէ » և ք. թէ չար և փնասակար կարծուած արարածներ ալ, միշտ առանց բացատրութեան, ստեղծուած են Աստուծմէ « Վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա » :

Աւր ցուցնելու համար Եզնիկ՝ այն զաւաններուն իսկ բնութեան կը դիմէ որ աղանդաւորներէն չար կը կարծուէին, հաստատելով թէ գիտցածնուն պէս չէ և չի կրնար իսկ ըլլալ, ապա թէ ոչ անկարելի պիտի ըլլար զանոնց ընդեկացնել, զոր հաստատելը փորձերու և փորձառութեան հակառակ է։ Եւ օրինակ կը բերէ թէ ինչպէս վայրենի կապիկները և զազանարաւոյ ալբերը ո՛չ միայն կ'ընդեկացնեն՝ այլ և հոպիտ ու կարգաւիչ կ'ընեն. թովիչներ ալ զանազան օձերու հետ չուանի պէս կը խաղան, և թէ — կ'ըսէ — օձերը (զոր և բոլոր անասնոց համար կրնանք ըսել) երբեմն մարդու մտհացու փնաս հասցնեն, զայն ի բնէ չար ըլլալէ պէտք չէ կարծել, որովհետեւ միայն ինքնապաշտպանութեան համար կ'ընեն։

Դեռ հոս պարզ են կողբացւոյն կենդանարանական զաղափարները. բայց նա աւելի ևս առաջ տանելով իւր օրինակները, ոչ միայն մեզի սովորական եղածէն զուրս, այլ և մեր գիտցածին ալ կարծես հակառակ օրինակներ կը բերէ. « Ոմն, կ'ըսէ, « զառիժու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համ « բոյր և ի քծինս, մինչև պատել զսնու « ցանեկեան. և եթէ այլ ոք ի նա հուպ « գայցէ, չմոռացեալ զբարս գազանու « թեանն՝ ի վերայ յարձակի և նորա

« սաստեալ գազանին իրր շան, ցածու « ցանէ յանաստ գազանութենէն » . և դեռ աւելին ևս՝ թէ « Այլ ոմն զգայլոյ « կորիւն սնուցանէ, և իրր զչան կորիւնս՝ « առ ընդեկութեան ընդ անձն անկանին » : Անշուշտ կողբացւոյն այս կարծիքը, մանաւանդ գայլին վրայ աւանդածը ումանց ծաղրական պիտի թուի ու բնագիտաց փորձերուն բողբոլիին հակառակ, այն ատեն լաւ է զայս ևս համարել այն ժողովրդական սխալներէն, որոնցմէ բնականաբար ազդուած Եզնիկ կ'աւանդէ նաև բասիլիսկոսին համար՝ թէ « Հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն », որուն համար կ'ըսէ. « Յորժամ ի ջրհորս գտանիցի, « ճրագ առեալ ի ջրանեն ի ներքս ըմբռնել, « զի հայեցեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ « մարդոյն օձն » :

Բ. մասին մէջ, այն՝ է թէ ամէն արաւած ստեղծուած է Աստուծմէ « Վասն միոյ օգտակարին գտանելոյ ի նոսա », արդէն այս խօսքերով որոշ կը յայտնէ, թէ իրեն համար բնութեան մէջ չկայ արարած մը որ օգուտ չունենայ, որովհետեւ քանի որ Աստուծմէ ստեղծուեր են, միշտ նպատակի մը համար են, և Աստուծոյ նպատակը չար կարծին իսկ հայհոյութիւն է։ Ահա այս է կողբացւոյն իմաստասիրութիւնը, զոր և շօշափելի փաստերով ցուցնելու համար, ոչ միայն կենդանիներէն՝ այլ և բոյսերէն ևս զանազան օրինակներ կը բերէ։

Նախ անասնոց համար կ'ըսէ ընդհանուր կերպով, թէ « Չկէսն ի պէտս (արար « Աստուած) և զկէսն ի զարդ և զկէսն « զարհուրեցուցիչս », հակացնելու համար թէ օգտակար ըսելով, պարզ ուտելու կամ խմելու համար ստեղծուած պէտք չէ հասկընալ, Ռետոյ աւելի մանրամասնօրէն կ'աւելցնէ թէ՛ « Լիսոցն մորթն պատսպա « բան մեղուկութեան մերոյ լինին... և այլ « ինչ յանդամոցն որպէս առիժուն « և արջոյ և այլոցն ըստ իւրաքանչիւր մի « ըստ միոյն » :

Ընտանի կենդանեաց մէջ ալ կը զանազանէ. « Կէսքն կրելիք և կէսքն ուտեա

լիք ք, այսինքն մաս մը իբր զրաստ գործածելու, մաս մ'ալ ուտելու համար, իսկ ուրիշ տեղ մը ո'չ միայն ընտանի կենդանիները, այլ և նոյն իսկ բոլոր զազանաց միսը կրնայ ուտուիլ, կ'ըսէ, և չի ֆիսսեր « Եւ եթէ զմիսն (զազանս) սիրտ « ոչ ոք տեսնոյր և ուտէր՝ ոչ ֆիսսէր. « որպէս վարագրի որ զազանագոյն է բան « զամենայն զազանս՝ ուտի միսն և ոչ « ֆիսսէ »:

Անցնելով բոյսերու՝ միշտ այն սկզբունքով թէ պէտք չէ արհամարհել ֆիսսակար կարծուածները, զանազան օրինակներ կը բերէ, ըսելով թէ երբեմն ատանձին ֆիսսակար կրնայ ըլլալ, և ուրիշ բանջարներու հետ խառնելով ո'չ միայն օգտակար՝ այլ և բուժիչ դեղեր կ'ըլլան. ինչպէս « Չմանրագորն, եթէ ոք լոկ ու « տիցէ՛ սատակիչ է, և խառնել ընդ « այլ արմատս, քնածու լինի քնահա « տաց »: Նաև « Կաղանջանան ազգ ինչ՝ « ատանձին սպանող է և խառնել ընդ « այլ դեղոյ՝ մաղձադեղ է բուժիչ ի մա « հուանէ »: Եւ ևն: Երբեմն ալ անոնց օգտակար կամ ֆիսսակար ըլլալը, եղանակէն և ժամանակէն կախումն ունի, զոր օր. « Չհազար՝ եթէ ի սօթ ժամանակի « ուտիցէ ոք, քանզի զովագուցիչ է, « զտապս ի փորոյն փարատէ, և եթէ ի « հով ժամանակի ուտիցէ ոք՝ ֆիսսէ »: Նոյնպէս « և մոլախինդդ որ ատանձինն « ի յայտնի ժամանակի սպանող է, նովիմր « զմաղձս հնացեալս հնարեն բժշկը հա « տանել »:

Թէպէտ կարճ է, Եզնկէն բոյսերու վրայ ունեցած հատակոտորներն, սակայն ասկէ՛ ևս ոչ միայն իւր բուսարանութեան, այլ և բժշկական դեղերու տեղեակ ըլլալը յայտնի կը տեսնուի՝:

Կողբացին այնքան առատ է կենդանաբանական զաղափարներով՝ որ մէկ երկու օրինակներ բերելով չի գոհանար. նոյնպէս

անոնցմէ քաղելիք նիւթական օգուտներէ չգոհանալով՝ կ'անցնի նաև հոգևորին, և այնպէս բնականօրէն կը նկարագրէ մեծ կենդանեաց հանդէպ ունեցած մեր իշխանութիւնը, և փորքներու հանդէպ՝ տկարութիւնը, որ կը ստիպէ ընթերցողը խոստովանելու՝ թէ՛ հեղինակին կենդանաբանական հմտութիւնը և թէ՛ իւր ոչնչութիւնը: Արդէն տեսանք թէ ինչպէս կենդանիները, ոչ միայն, կ'ըսէր, « ի պէտս և ի զարդ » ստեղծուեցան, այլ և իբր « Զարհոյրեցողիք »: Իսկ ուրիշ տեղ մը զարմացած Աստուծոյ իմաստութեան վրայ, տես, կ'ըսէ, ինչպէս « Չբոտեօքն զկծեցուցանէ « զմեզ, որպէս լուսնի և ճանճիւ և մթնով « և զոռնիով, քնով և մկամբ որ շնչիկըն « են... և նոքօք ցածուցեալ զնստուցանէ « զմիտս մեր: զի յորժամ գիտցեմք՝ թէ « և փորքներն կարող են մեզ ֆիսսակար « լինել՝ իջցուք ի տարապարտ հպարտու « թենէ »: Դարձեալ ուրիշ տեղ մը ևս. « Չմեծամեծս հնազանդէ մեզ, զփրկս « զուղտս և զառիւս և զինծս և զյովազս « և շնչենեօքն աշխատ առնէ »: Եւ ևս թէ՛ « Որոք նա (Աստուած) կամի՝ յաղթականը « կարեմը լինել: և որոք ոչ կամի՝ չկա « բիմը յաղթելի՝ ոչ միայն արգաստարացն « այլ և շնչենոցն: Չի նչ վատթարագոյն « քան զյուն... կայցէ, և զայն ո'չ սպառել « կարեմը և ոչ յաշխարհէ մերժել »:

*
* *

Կ'երևի թէ Հայաստանի գիւղերուն մէջ շատ նեղուեր է կշիռիկ այս ասպատակող լուրերն, որ այնքան կը կրկնէ անոնց հասուցած ֆիսսները, ինչպէս միշտ դարու ազգային մատենագիր մ'ալ նոյն վիճակին մէջ գտնուելով, կը ստիպուէր՝ նոյն իսկ գրութեան մէջ անկապ փակագիծ մը բանալ ու խոստովանիլ, թէ լուրեր կը տանջուիմ, նոյն իսկ մեր հեղահոգի Նալբեկացին, բնականաբար նոյն պարագաներու մէջ զանուած՝ յետ իւր սուրբ ազօթից մէջ յիշելու, խորհրդաւոր քողերու և այլաբանութեանց տակ, լուրերու ազգակից՝ « Բիծք բոցակիցք »-ը ակնարկելով

1. Ուրիշ տեղ մ'ալ կը յիշէ Եզնկի օձն թերակէ ընտելու որ զօրաւոր դեղթափ մ'է կ'ըսէ: Նաև կենդանեաց ճրագուէն դեղնեղի պատրաստուիլը, ևն ևն:

գարշելի մլուկը և անոր ընկեր «Ջագրա-
թորմի քրտնածին երամականներ», հուսկ
յետոյ ի խորոց սրտէ մըմնջելով մանրա-
մասնօրէն կը նկարագրէ այս չարածճի
լուերու դիցազնական ասպատակութիւնը՝
կողբացալոյն պէս՝ անոնց չարածճութենէն
հոգեւոր պտուղ քաղելու նպատակաւ:

Եզնիկ ոչ միայն կենդանեաց կազմու-
թիւնը, յատկութիւնը և անոնցմէ քաղե-
լիք զանազան օգուտները կը ճանչնայ,
այլ նաև կը քննէ անոնց հոգեբանութիւնը
և կը դիտէ անոնց զանազան բնագոյնի
շարժումները: Ջոր օրինակ, կը բանայ
առջևդ գարնանային գեղեցիկ տեսարան
Պը և կը ցուցնէ կարգաւ, բնական ազ-
դեցութեամբ՝ ծիծառներու « յառաջ քան
զաշուն ի ջերին տեղիս ի ձմեռոց» երթալը,
և խորհրդու « իմանալն յառաջագոյն զձմե-
ռունս կարևորս, և վաղ ի մարմանդ տեղիս»
փութալը. աղանեսաց համագունդ երամ
երամ թոյլքը, և ճայից տարմատարմ՝ ա-
զաւուց ալ տաք տեղեր դիմելը, են են.
յետոյ անցնելով նաև շորքոտաններուն,
բնագոյնի է՝ կ'ըսէ, արջուն ձմեռ գալէն
« առաջ իւր բայցը քաշուիլը, և երէին
լեռներէն դաշտ իջնալը, եղջերուին « Գտա-
կաւ զժամանակ խառնիցն» իմանալը, « և
իշալայրից քինացելոց» զարու յաւանակս
ի մատաղութեան» կտտելը. են: Եւ այն իսկ
իւր սուր աչքերէն չէ վրիպած, եզին ձմեռ
ժամանակ, բնագոյնի, զոմին խորը ալուց
կողմը նստելը և զարնան մօտ դրան կողմ
դառնալը, են: Իրտողութիւններ՝ որոնց
մէջ որքան որ մեզի ծանօթ և սովորական
դարձածներ զտնուին, սակայն չեն պակ-
սիր, եթէ չըսենք բոլորովին անծանօթ,
այլ մեզի ոչ սովորականներ ալ: Նա զեռ
կը շարունակէ՝ իւր դիտողութիւնները,
չուզելով անտեսել աշխատասիրութեան օ-
րինակ երկու միջատներն ևս: Ժիր մեղրուի
աշխատանքի առջև ուշ դրած կը դիտէ
և դիտել կու տայ անոնց ևս յետ այնքան
աշխատելու, ձմեռ ժամանակ բնագոյն մը-
ղուած մեղրուանց քաշուելով դռները ա-
կանամուտով փակելը. և վերջապէս անկէ
ալ անցնելով կ'երթայ՝ ըստ սողոմոնեան

առածին՝ մինչև իսկ ամենափոքրիկ անաս-
նիկին՝ մըջիւնին դուռը: Հոն քնախոյզի
հետաքրքրութեամբ մանրամասն կը դիտէ,
կը զննէ անոնց ևս բնագոյնի ամառ ատեն
շարունակ աշխատիլը, և երբեմն խոնաւ
կտիկները որջերէն դուրս հանելով, արևու
տակ ցամաքեցնելու համար պիտիլը, և
մինչև իսկ նոյն հատիկները մէջ տեղէն
երկուքի բաժնելը, որպէս զի (սաղմը փնա-
նալով) խոնաւութենէ կրկին չծիրն:

Յիրաւի հիացման և զարմացման ար-
ժանի են կողբացալոյն այսքան խոր և
մանրամասն դիտողութիւնները: Այլ նա
զեռ հոս ալ կանգ չ'առնիր, կը բարձրա-
նայ մինչև մարդկային բնութիւնը և կը
ցուցնէ թէ ո՛չ միայն անասունները՝ այլ
և մարդ ալ օժտուած է բնագոյնի, այս
գեղեցիկ պատճառաբանութիւնը աւելցնե-
լով. « Զի յորժամ ի խորհրդական
« զգուշութենէն գեղծիցի, բնական ազդե-
ցութեամբն պատապարեսցի » . այսինքն
երբ Աստուծոյ տուած խելքը չբանցնէ,
գէթ կայ զգացած բնագոյնի զգուշանայ
կամ կարեւոր խալսիս վտանգներէն:

Յետոյ ջնջելու համար նաև այն ժո-
ղովորական կարծիքը՝ թէ « Յօրանջին
« և ձգտել, փնջին և ունկան հարկանել,
« լեզուին և ըմբանին կծել ի դիւէ լինին »,
ստղգ տեղեկութիւններ կու տայ անոնց
մասին: Եւ անոր համար ալ կ'ըսէ թէ
« ի մեղկութենէ և թուլութենէ մարմնոյ
« լինին. ուստի զստկ յօրանջին և ձգ-
« տելն՝ հմուտ բժիշկը ի մթերելոյ մալա-
« սոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ
« առնէ. զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ,
« սարսափին զայ զոսկիբօցն և քստմունք
« գնան ընդ անդաման » : Հուսկ՝ կ'անցնի
նաև երազոց պատճառներուն և կը ցու-
ցնէ թէ միշտ սատանայէ չեն, այլ երբեմն
կրնայ հանդիպիլ, ինչպէս նաև երբեմն
Աստուծոյ ազդեցութեամբ ալ կրնայ ըլլալ,
բայց սովորաբար բնական կերպով՝ « Զոր
« ցերեկ ընդ բերան ածիցէ մարմն, ի նոյն
« և ի դադարել մարմնոյն և ի քունն զբաղ-
« նուն միտք » :

ԵՂ. ՍՏԵՓԵՍ ՏԵՐԱՆԵԱՆ